

Քրիստոսի խաչը իր դրօշակը ըրած էր: Ուաչի մասունքները տարածուեցան հռովմէական կայսրութեան բոլոր կողմերը, ինչպէս որ կիւրեղ Երուսաղիմացին կը պարծենայ միայն քսան տարի յետոյ (կոչ. Ժ. 19): Բայց մեծագոյն մասը մնաց Երուսաղէմի մէջ (անդ. Ժ. 19), ուր ոսկուղ և թանկագին քարերով զարդարուած՝ նոր եկեղեցիին գլխաւոր մասունքը կ'ըլլայ, որուն կը միանան խաչելութեան ուրիշ յիշատակներ՝ խաչին *սախսակը*(\*) , սպունգին եղէգը(\*\*) գեղարգին(\*\*\*) հետ. զարձեալ նոյն ժամանակները, հոկտ. 28 ին կիւրակէ օրը, տաճարին շուրջը թափօրով կը պտտցնէին, իսկ երեքշաբթի և չորեքշաբթի օրերը այրերուն՝ հինգշաբթի և ուրբաթ օրերը կանանց ցոյց կը տրուէր երկրպագութեան համար:

Եւսեբիոս մասնաւոր նշանակութիւն մը չի տար ոչ Գողգոթայի ժայռին և ոչ ալ Ուաչափայտին: Իրեն համար կը մնայ միայն Ս. Գերեզմանը: Բայց կայսեր, Երուսաղէմի եպիսկոպոսին և Քրիստոնէութեան համար մեծ կարեւորութիւն ունեցաւ գեղազարդուած մայր եկեղեցին՝ իր կրկնայարկ երկկողմանի դաւիթներով՝ Գիւտ խաչի տեղւոյն վրայ կառուցուած եւ նուիրագործուած մատուռով, իբր պահապանը իր տեղւոյն մէջ գտնուած Ուաչափայտին:

միեւնոյն ժամանակ պիտի հաստատուէր աբարհի կեդրոնը: Թերեւս աւ է Մասապայի մոզայիք քարտախին **ցից-ուղեցոյցը**, հիւսիսային դրան ներսի կողմը սնկուած:

(\*) **Անտոնիոս** (Geyer, էջ 172), **Պետրոս Սրկ.** (նոյն, էջ 107):

(\*\*) Հեռակ կայսեր ժամանակ, սպունգը կ'ապուած էր խաչին, եւ Ս. Յարութեան սահարին մէջ ուր միասին կը կրէր պատրիարքը, Սեպտ. 14ին ցոյց կուտար ժողովուրդին երկրպագութեան համար. (սե'ս P. T. S. հաս. XI. էջ 22-23):

(\*\*\*) **Անտոնիոս** (անդ. էջ 173. **Արգուլե.** անդ. էջ 235).